նիւ ձգտումով՝ իր հարուստ կարողութիւնները ի սպաս դնելու հայրենի աշխարհի մատաղ սերնդի դաստիարակութեան գործին. մի մարդ, որ այդչափ վառ հայրենասէր էր, այնչափ խորը չնորհակալութիւն էր տածում իր կայսեր հանդէպ, որը կատարելով նրա փափագը Դորպատում գերման կրթութիւն ստանալու՝ պահանջուած միջոցներ էր ընձեռել նրան, որով եւ նրա մեծագոյն բարերարը դարձել. մի մարդ, որ այդչափ աչքառու զէմք էր, այն եւս ա՛յնքան սակաւապետ,— այսպիսի մի մարդու համար, երկրի ճշմարիտ շահերի տեսակէտից, փափագելի է որ ատեղծըւէր գործունէութեան շատ աւելի լայն ասպարէզ: Եւ սակայն ներկայ բաւական սահմանափակ պայմաններում անդամ, գերման ոգու, գերման առաքինութեան այդ կորովի սերմանողը կարող պիտի լինի իր հայրենի քաղաքի պատանեկութեան հոգում բարի սերմեր ցանել այն աննկուն յուսով, որ նրանք լաւ էլ բերք պիտի տան» (էջ 85–86):

* * *

Նախ քան Վաղների աշխատութեան ուրիշ մասերին անցնելը՝ այստեղ առաջ բերենք նաեւ այն՝ մեզ համար դարձեալ խիստ արժէքաւոր՝ թուական տուեալները, որ գտնում ենք նրա մօտ, թէեւ, դժբախտաբար, խիստ համառօտ, Հայաստանի վիճակագրութեան մասին այն ժամանակները: Նման ուրիշ տուեալների հետ միասին՝ նրանք ամբողջացնում են Հայաստանի ազգաբնակչութեան թուական պատկերը 1840–ական թուականների համար:

«1828 թուականից սկսած (պարսիկների եւ տաճիկների հետ կնքած հաշտութեան դաշների հետեւանքով, որոնցով ազատ էր թողնուում հայերի ներգաղթը այդ երկիրներից) Ռուսաստանի մաս էազմող Հայաստանի ազգաբնակչութեան ներկայ վիճակը, ինչպէս որ տեսնում ենք Անդրկովկասում տասը տարի գործած ելեւմտական պաշտօնեայ ֆոն Շոպէնի (von Chopin) մանրամասն տախտակներից, որ ֆոն Քէօպէնը*) (von Koeppen) տեղեկագրել է գիտութեան կայսերական կաճառին, ցոյց է տալիս, որ երկրի ցեղային նոր բնակչութիւնը աճել է մասամբ, բաղդատելով նախկին վիճակի հետ:

Արեւմուտքից դէպի արեւելք, Երասխի հիւսիսային եզերքին տարածուող երեք երկրամասերի (Provinz) — Երեւան, Նախիջեւան եւ Օրդուբաթ — բնակչութեան ամբողջական թիւն է ներկայիս (1841 թ.) — 164,450 հոգի*): Դրա մեծագոյն մասը, 122,968 չունչ, ընկնում է Երեւանի, իսկ նուազագոյն մասը, 10,975, Օրտուբաթի վրայ: Նախիջեւանը (ամբողջ շրջանը) իր 30,507 բնակիչներով միջին տեղն է բռնում: Ըստ կրօնի՝ համարեա երկու հաւասար մասի են բաժանուում նրանք. քրիստոնեայ՝ 82,377 հոգի, մահմետական՝ 81,749 հոգի: Երրորդ կրօնին հետեւողները, եզիտիները, ընդամէնը 824 հոգի են: (Էջ 48 եզիտիների թիւը տրուած է 324):

Հրեաներ, որ հնումը շատ կային այստեղ, բոլորովին բացակայում են: Եզիտիները ամէնն էլ վաչկատուն են ու բաժանուած 67 գերդաստանների: Մահմետականներից 1344 ընտանիքներ տակաւին վաչկատուն են, իսկ 14,734 ընտանիք՝ նստակեաց: Քրիստոնեաները բոլորն էլ ըստ երեւոյթին նստակեաց են: Դրանք հայերն են:

«Հայ քրիստոնեաների թիւը ներգաղթից առաջ կազմում էր 4428 ընտանիք՝ 25,151 չունչով: Պարսկաստանից նոր եկած (1828–ին եւ 1829–ին) ընտանիքների թիւն էր 8036, ընդամէնը՝ 35,500 չունչ: Հայաստանի տանկական սահմանից նոր եկած ընտանիքների թիւը հաշուում էին 3682, ընդամէնը 21,666 չունչ: Այսպիսով, ուրեմն, յաւելումը եղել է ընդամէնը 57,226 չունչ**), որով ազգաբնակչութեան նախկին թիւը (25,151) եռապատկուած պիտի լինէր, եթէ այնուհետեւ նոր կորուստներ առաջացած չլինէին:

«Ցիշեալ թուից 20,377 հոգին երեք քա-

*) Հաքստհաուզէն եւս տալիս է գրեթէ նոյն թիւը (164,500), իսկ Բոդենշտէդտին նայելով՝ 180–200,000:

**) «Ֆոնտան (Fontan) Տաճկաստանից եկածների համար շատ աւելի մեծ թիւ է տալիս, քան Շոպէն, այն է՝ 90,000 չունչ»:

*) Հաքստհաուզէն եւս յիշատակում է վերջինիս թուական տուեալները: